Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2023թ.
ապրիլի 28-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«28» ապրիլ 2023թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

I. **Ընդհանուր դրույթներ**

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհուրդը (այսուհետ՝ Գիտական խորհուրդ) ռեկտորի նախագահությամբ գործող կոլեգիալ մարմին է, որն իրականացնում է Համալսարանի ընդհանուր ղեկավարումը՝ Համալսարանի կանոնադրության և հոգաբարձուների խորհրդի որոշումներին համապատասխան:
2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:
3. Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, դասախոսների և ուսանողների համար:
4. Սույն կանոնակարգը ընդունվում է և կարող է փոփոխվել Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

II.**Գիտական խորհրդի իրավասությունները**

5.Գիտական խորհուրդը ձևավորվում և գործում է Համալսարանի կանոնադրության համաձայն:

6. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը,

2) իրականացնում է Համալսարանի կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական գործունեության համակարգման ընդհանուր լիազորություններ,

3) ռեկտորի առաջարկությամբ դիմում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական կենտրոններ, կառուցվածքային այլ ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու, լուծարելու վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով,

4) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, Համալսարանի և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ ներքին իրավական ակտեր,

5) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների սահմանում է վարձաչափերը,

6) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ Համալսարանում կատարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

7) Ընդունում է «Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտոր», «Գավառի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր», «Գավառի պետական համալսարանի պատվավոր բարերար», «Գավառի պետական համալսարանի վաստակավոր գիտաշխատող» կոչումները շնորհելու, Համալսարանի մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, Համալսարանի մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների ու կոչումների համար թեկնածուներ ներկայացնելու վերաբերյալ որոշումներ,

8) շնորհում է գիտական կոչումներ, իրականացնում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր

պաշտոնների տեղակալման մրցութային ընտրություններ և հաստատում ընտրությունների արդյունքները,

9) Համալսարանի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմնին ներկայացնում է առաջարկություններ Համալսարանի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ,

10) ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Համալսարանի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ,

11) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր,

12) քննարկում և հաստատում է Համալսարանի աշխատակիցների վերապատրաստման դասընթացների ծրագրերը,

13) ըստ անհրաժեշտության ստեղծում է Գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը,

14) քննարկում է Համալսարանի ֆակուլտետների, այլ ստորաբաժանումների տարեկան գործունեության մասին հաշվետվությունները, ինչպես նաև Համալսարանի միջազգային կապերի ուղղությունները և համագործակցության ծրագրերը,

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և Համալսարանի կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

III. **Գիտական խորհրդի կազմը**

7. Համաձայն Համալսարանի կանոնադրության 49-րդ կետի՝ Համալսարանի գիտական խորհուրդը կազմված է ռեկտորի կողմից ի պաշտոնե նշանակվող և Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընտրված անդամներից:

8. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 32-ը, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

9. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, արհեստակցական կազմակերպության ղեկավարը, ուսանողական խորհրդի նախագահը, ռեկտորի նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ Գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան: Համալսարանի գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրում է ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է Համալսարանի ուսանողական խորհուրդը:

10. Ընտրությունների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի քանակը որոշում է Համալսարանի ռեկտորը:

IV. **Գիտական խորհրդի աշխատակարգը**

12. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն ութ անգամ:

13. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Համալսարանի ռեկտորի որոշմամբ:

14. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են Համալսարանի ռեկտորը և գիտական քարտուղարը:

15. Գիտական խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին տեղեկացվում է ամենաուշը 3 օր առաջ, գրավոր ձևով:

16. Օրակարգի հաստատումից հետո այն ծանուցվում է Գիտական խորհրդի անդամներին:

17. Համալսարանի ռեկտորը՝ որպես Գիտական խորհրդի նախագահ, բացելով խորհրդի նիստը, քվեարկության է դնում օրակարգը:

18. Գիտական խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

19. Համալսարանի գիտական քարտուղարը կազմում է Գիտական խորհրդի նիստերի արձանագրությունը:

20. Օրակարգի հարցերը ներկայացվում և լուսաբանվում են համապատասխան զեկուցողների կողմից:

21. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ, գաղտնի քվեարկության մասին: Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

22. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել Գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև Գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

23. Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

24. Գիտական խորհրդի որոշումները կենսագործվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

25. Համալսարանի ռեկտորն իրավունք ունի կասեցնելու Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում խորհրդի իրավասությունից, հակասում են ՀՀ գործող օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներհամալսարանական այլ ակտերին:

26. Գիտական խորհրդի կասեցված որոշումները Համալսարանի ռեկտորը Գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում դնում է վերաքննարկման և վերաքվեարկության:

V. **Գիտական խորհրդի նախագահի իրավասությունները**

27. Գիտական խորհրդի նախագահը.

1) վարում է Գիտական խորհրդի նիստերը՝ կանոնակարգին համապատասխան,

2) ըստ հերթականության ներկայացնում է զեկուցողներին և ելույթ ունեցողներին,

3) Գիտական խորհրդին ամենամյա զեկույց է ներկայացնում Համալսարանի ընդհանուր վիճակի մասին,

4) Գիտական խորհրդի նիստերում տալիս է տեղեկություններ Համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատանքների մասին,

5) անհրաժեշտության դեպքում հրավիրում է Գիտական խորհրդի արտահերթ նիստ, կասեցնում է Գիտական խորհրդի որոշումների իրականացումը, որոնք դուրս են խորհրդի լիազորությունների շրջանակից,

6) իր անհամաձայնության դեպքում Գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումը կասեցնում է և նշանակում վերաքննարկում և վերաքվեարկություն,

7) Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում մշտական և ժամանակավոր հանձնաժողովների կազմերը,

8) քվեարկության է դնում քննարկվող հարցերը,

9) ամփոփում է նիստի արդյունքները,

10) հաստատում է Գիտական խորհրդի կանոնակարգը և խորհրդի կողմից ընդունվող այլ ակտերը:

8. Հարցերի քննարկման և որոշումների կայացման կարգը Համալսարանի գիտական խորհրդում

28. Գիտական խորհրդի նիստի սկզբում գիտական քարտուղարը գրանցում է նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայությունը: Անհրաժեշտ քվորում չապահովելու դեպքում ռեկտորի որոշմամբ կարող է երկարաձգվել գրանցումը՝ մինչև քվորումի ապահովումը, կամ հետաձգվել նիստը: Հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է ընդհանուր կարգով:

29.Օրակարգի հարցերի քննարկումը սկսվում է հիմնական զեկույցով: Հիմնական զեկուցողին կարող են տրվել հարցեր, զեկուցումից հետո տեղի է ունենում նույն հարցի քննարկում Գիտական խորհրդի անդամների մասնակցությամբ:

30.Հիմնական զեկուցողին տրվում է 15 րոպե՝ ելույթի համար, քննարկմանը մասնակցողներին՝ 10 րոպե: Արտահերթ կամ լրացուցիչ ելույթի համար տրվում է 5 րոպե ժամանակ:

31.Զեկուցողը չի կարող շեղվել բուն նյութից, ինչի մասին, անհրաժեշտության դեպքում, նրան նախազգուշացնում է Գիտական խորհրդի նախագահը:

32.Մտքերի փոխանակությունից հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը կարող է հանդես գալ եզրափակիչ խոսքով:

33.Հիմնական զեկուցողի առաջարկությունները դրվում են քվեարկության:

34. Հիմնական զեկուցողի առաջարկության մերժման դեպքում քվեարկվում են այլ առաջարկություններ՝ ըստ հերթականության:

VII. **Քվեարկության կարգը**

35.Համալսարանի Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները պետք է ընդունվեն փակ, գաղտնի քվեարկությամբ:

36.Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների համալրման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնների վարիչների ընտրության և այլ մրցույթների քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի:

37.Փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու համար Գիտական խորհրդի կազմից ընտրվում է ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովը որոշումներն ընդունում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

38.Առաջադրված թեկնածուների ազգանունները քվեաթերթիկներում տեղադրվում են այբբենական կարգով:

VI. **Գիտական խորհրդի հաշվիչ հանձնաժողովի աշխատակարգը**

39.Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը, պատրաստում է քվեաթերթիկներ փակ, գաղտնի քվեարկության համար, ապահովում է քվեարկության գաղտնիությունը,

40.նախքան փակ, գաղտնի քվեարկությունը՝ գիտական քարտուղարը հաշվիչ հանձնաժողովին է ներկայացնում Գիտական խորհրդի անդամների ցուցակը,

41. փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկը ստորագրությամբ տրվում է Գիտական խորհրդի անդամին,

42. Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ ստանում է մեկ քվեաթերթիկ,

43. քվեաթերթիկում պետք է նշվեն Համալսարանի գիտական խորհրդի նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարին, կարգային համարը, քվեարկության դրվող հարցի ձևակերպումը, քվեարկության տարբերակները («կողմ»», «դեմ»»),

44. մրցութային ընտրության դեպքում Գիտական խորհրդի անդամը քվեաթերթիկից ջնջում է այն անդամի ազգանունը, որին նա դեմ է քվեարկում, և թողնում է այն անդամի ազգանունը, որի թեկնածությանը կողմ է. եթե ջնջված չէ այս տարբերակներից որևէ մեկը, կամ ջնջված են երկուսն էլ, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր,

45. հաշվիչ հանձնաժողովը քվեարկության արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն, որը ստորագվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից,

46. հաշվիչ հանձնաժողովի նախագահը Գիտական խորհրդի նիստում զեկուցում է քվեարկության արդյունքների մասին,

47. եթե քվեարկության արդյունքներով թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում բավարար քանակությամբ ձայներ, ապա անցկացվում են նոր ընտրություններ: